ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՆԱԽԱԳԻԾ

Կ-394-22.11.2013-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի 66-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 4-րդ կետից հանել «և պայմանագրով» բառերը.

2) 1-ին մասը լրացնել նոր՝ 7)-րդ, 8)-րդ, 9)-րդ, 10)-րդ, 11)-րդ և 12)-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ.

«7) էլեկտրական էներգիայի և բնական գազի հաղորդման (փոխադրման) ու բաշխման լիցենզիա, ջրի մատակարարման նպատակով ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող անձանց, ինչպես նաև բնական գազի փոխադրման համակարգերի սեփականատիրոջը՝ էլեկտրական էներգիայի և բնական գազի հաղորդման (փոխադրման) ու բաշխման կամ ջրի մատակարարման համակարգերի նախագծով նախատեսված շենքերի, շինությունների կամ այլ օժանդակ կառույցների կառուցման համար հողամասերի տրամադրման դեպքում.

8) քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող կառուցապատված հողամասերի, ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության հողամասերի ընդլայնման համար, եթե հնարավոր չէ լրացուցիչ օտարվող հողամասը որպես առանձին գույքային միավոր օտարել աճուրդային կարգով: ՀՀ կառավարությունը սահմանում է այն չափորոշիչները, որոնցից ելնելով հնարավոր կլինի որոշել, թե տվյալ հողամասը որպես առանձին գույքային միավոր հնարավոր է օտարել աճուրդային կարգով, թե ոչ: Ընդլայնման նպատակով լրացուցիչ օտարվող հողամասի չափը չի կարող գերազանցել սեփականության իրավունքով տրամադրված (ձեռք բերված) հողամասի չափը:

Հողամասի ընդլայնման նպատակով կարող է հողամաս տրամադրվել միայն մեկ անգամ:

9) սույն օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասով, ինչպես նաև «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում.

10) սույն օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում.

11) բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքում գտնվող հողամասերը հասարակության և պետության կարիքների համար օտարվող սեփականության ձեռքբերողին: Ընդ որում, պետական հողամասերի օտարման դեպքում հողամասերի ուղղակի վաճառքի գինը սահմանում է կառավարությունը:

12) Պետությանը կամ համայնքներին:»:

3) 2-րդ մասում «վաճառքի գինը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ մասով և սույն հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով սահմանված դեպքերի,» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
Աժ պատգամավոր Արփինե Հովհաննիսյան	Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը թողնել նախկին խմբագրությամբ՝ հետագայում նման դեպքերը վերանալու դեպքում անրադառնալ այն ուժը կորցրած ճանաչելու հարցով:	Ընդունվել է	Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը թողնել նախկին խմբագրությամբ
Աժ պատգամավորներ Վ.Այվազյան և Խ.Հարությունյան	1. Նախագծով առաջարկվող՝ Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 7-րդ կետում «ջրի մատակարարման համակարգերի» բառերից հետո լրացնել «նախագծով նախատեսված» բառերը. 2. Նախագծով առաջարկվող՝ Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ կետում «սեփականության իրավունքով պատկանող» բառերից հետո լրացնել «կառուցապատված հողամասերի, ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության» բառերով. 3. Նախագծով առաջարկվող՝ Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 9-րդ կետը հանել:	Ընդունվել է Ընդունվել է Ընդունվել է	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն Նախագծից հանվել է առաջարկվող կետը